այժմս էլ կրում են արյունակցական անուններ, այսպես. Խնձորեսկում՝ Արշանց, Կատվանց, Բըրզանոնց[2], Բոզունց[3], Դաղալունց բերդ[4], որի դիմացն է Ջանունց բերդը։ Թաղերը ունենում էին և հատուկ իրենց բերդը Գորիսում՝ Մինասանց, Դոլունց ձորը, Ափունց քալա[5], Օհանին թաղը[6]։ Բայց դրանք մեծ մասամբ աճած գերդաստաններ են, իրարից բաժանված ընտանիքներից առաջացած և թեև կազմում են մի ասկ կամ ցրխ՝ ցեղ, սակայն դա իր էությամբ շատ է տարբերվում հին տոհմից և չունի ներքուստ այն տնտեսական միասնությունը, որը հատուկ էր տոհմին, մի ընդհանուր ղեկավարի և նրան կից ավագների խորհրդի հեղինակությամբ շաղկապված, փոխադարձ ամուր պարտականություններով՝ պաշտպանության, վրեժխնդրության, փոխադարձ տընտեսական օժանդակության և կրոնական պաշտամունքով միաձուլված արյունակցություն։

Տոհմական հասարակարգը մեզնից ավելի քան մեկ ու կես դար առաջ արդեն վաղուց հիմնովին քայքայված, կործանված էր։ Նրանից պահպանվել էին միայն անջատ-անջատ բեկորներ։ Տոհմակցաց անցյալի այդպիսի մնացորդներ էին մինչև վերջին ժամանակներս դեռ ապրող մի քանի սովորություններ։ Այսպես, թե՛ նոր ընտանիք կազմելու, նշանդրէքի և հրսանիքի, թե՛ այդ ընտանիքի անդամների թվի ավելանալու՝ տղաբէրի կամ պակասելու՝ թաղման դեպքերում ազգականներն ու բարեկամները հայտնաբերում էին իրենց շահագրգռվածությունը։ Արյունակցական միասնության այդ գիտակցությունից էր հատկապես բխում ազգականների և բարեկամների մասնակցությունը հետևյալ դեպքերում՝

1. Հարսանեկան ծախքերին Կանչի միջոցով։

2. Այն միջոցառումները, որոնցով սգվոր ազգականներն և նրանց նոր ննջեցյալներն էլ հրավիրվում էին հաղորդակից լինելու հարսանեկան ուրախություններին։

3. Նորապսակների և հարսանքավորների եկեղեցի գնալիս և եկեղեցուց վերադառնալիս ազգականների և բարեկամների տներից դուրս բերած քաղցրեղենի թիֆանէրը։

4. Ազգականներին և բարեկամներին շտապ տեղեկացնելը ընտանիքի մեջ նոր անդամի ավելանալու մասին և այդ առիթով նրանց կողմից ծննդկանին նվերներ բերելը։

5. Ազգականների և բարեկամների կողմից բերած մթերքով ննջեցյալի տանը ճաշկերույթ պատրաստելը թաղման հաջորդ օրը, թարմ գերեզմանն այցելելուց հետո և առհասարակ սգին ազգովին մասնակցելը։

6. Հին արյունակցական համայնքի բարոյաբմբոնումի հեռավոր արձագանքներ էին ամբողջ գյուղում գյուղատնտեսական աշխատանքների դադարեցումը մինչև ննջեցյալին հողին հանձնելը։

7. Ընդհանուր մատաղները և հացկերույթները Մեծ պասի առաջին օրը գյուղի բոլոր ննջեցյալների հիշատակին նվիրված և Ջատկական ախարն ու մեռելոցը։

---

[2] Բրզանի՝ դղում։

[3] Բոզ՝ սպիտակավուն։

[4] Մխիթար սպարապետի սպանման վայրը։

[5] Հմմտ. արաբ. kale—բերդ։

[6] Խոր ձորի մեջ մեծ քանակությամբ այրեր կան, որտեղ Լաստիխուի բլուրի մոտ կռվի ժամանակ պատսպարվում էին թաղեցիք։ Կենտրոնական Ղալաքերծի վրա էլ կան բազմաթիվ քըրատակներ վտանգի ժամանակ առանձնանալու համար։